

Ամբաս Բիւրաս

Խմբագրութիւն «Փիի՛նիկ», Ի Ալեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Ղր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Յր. 8  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6

# Փիի՛նիկ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵԲՇՆԱԲԹԻ 26 ՄԱՐՏ 1902

ԹԻԻ 44

ԺՈՂՈՎՐԴԻՆ ԸՆՏՐԱԾՆԵՐԸ

ԿԱՍ

ՆՈՐ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փիի՛նիկի 2. Յաւելուածը — որ լոյս տեսաւ այս ամսուան 22ին շաբաթ իրիկուն — կը կնքէինք «Խաղաղութեան Հրաւեր»ով մը, որ այսպէս կ'սկսէր. «Պատմական օր մը վաղուան օրը:»

Ու հոյակապօրէն պատմական եղաւ այդ վաղուան օրը, Մարտ 23ի կիրակին:

Առաւօտուն ժամը 8ին սկսաւ տողանցութիւնը քուէարկուններուն, որոնք, տենդոտ ու անհամբեր, կը խոնէին Ս. Պօղոս Պետրոսի շրջափակը, վարժարանին սանդուխէն վեր կ'ելնէին կարգաւ. գուռը կը հսկէր յաղթահասակ կարիճ մը, մէկիկ մէկիկ ներս մտցնելով ընտրողները Մանկապարտէզին սրահը, ուր գումարուած

էր Պատկ. Ընտրող. ժողովը շրջապատուած՝ արձանագրութեան դպիրներէն որոնք կարգաւ նստած էին զբասելաններու առջև, ընտրողներուն կամ անոնց փոխանորդներուն անունները մասնաւոր տետրակներու մէջ նշանակել տալու պաշտօնով:

Քուէարկութեան գործողութիւնը լուիկ մնչիկ ու հանգարտիկ առաջ կը տարուէր և ահա՛, Վսեմ. Պօղոս Բաշա Նուպար իր համակրելի որդւոյն Ազն. Առաքել Պէյի հետ, սրահը խոնող ժողովրդին մեծաձայն կեցցէներուն մէջէն անցաւ ու ներս մը տաւ:

Քուէարկութիւնը — չը նշանակելով քանի մ'ոչ — աննշան միջադէպեր, որոնք սակայն կրնան տեղի ունենալ ուրիշ քաղաքակիրթ կեդրոններու մէջ ալ — տեղիս հասարակութեան արդար հպարտութիւնը գգուելու աստիճան կանոնաւոր կատարուեցաւ: Ժողովուրդը, նորին Վսեմութեան ներկայութենէն աւելի սիրտ առած, կրցաւ լսեցնել իր բանաւոր դիտողութիւնները, առանց վերաւերելու Ընտ-

րող: Ժողովոյ ինքնասիրութիւնը: Ոստիկաններու բացակայութիւնը մանաւանդ, մեծապէս ապահովեց կարգին ու հանդարտութեան պահպանուիլը:

Հպարտ ենք ըսելու թէ՛ ժողովուրդը բոլոր՝ մէկ սիրտ ու մէկ մարմին՝ ի՛նք կը կատարէր ոստիկանութեան դերը: Այսպէս տեւեց մինչեւ կէս օրէն ետքը ժամը 1:

Անձամբ բերուած քուէները ձրգուած էին քուէտուփին մէջ, կը մնար դեռ վերաքննութեան բովէն անցընել փոխանորդով բերուած ու պահարանի մէջ ներփակուած քուէները, թուով 250է աւելի:

Վսեմ. Պօղոս Բաշա Նուպար անձամբ կնքեց քուէտուփը, բարձրաձայն յայտարարեց ժողովուրդին որ ժամը 3 ին նորէն գալով համախմբուին Ս. Պօղոս Պետրոսի Տաճարը, քուէհամարի գործողութիւնն ու արգիւնքը տեսնելու համար. քիչ յետոյ սրահը թողուց, խոստանալով վերադառնալ ժամը 3ին:

Ժողովուրդը, բովանդակ հայ Ազգ. քահանգրիան, սրահին մէջ ու շրջափակը խոնած, խանդավառ կեցցէնելու անվերջ որոտումներով ողջունեց իր միշտ յարգած ու սիրած մեծ անձնաւորութիւնը որ, մանաւանդ մեկնելու վայրկենին, հանրային ա՛յնքան անկեղծ ու ա՛յնքան շերտազին համակրանքի արտայայտութեանց առջեւ շատ յուզուած կ'երևէր:

Եթէ այս տեսարանին լրջութիւնը թեթեցնելու վախը չ'ունենայինք, պիտի ըսէինք նաև թէ՛ Վսեմ. Բաշան, մեկնելու միջոցին ծունկերուն ծածկոցը սրահը մոռցած ըլլալով, ինդամուլ ամբոխին կրկնած ու բազմապատկուած աղաղակներուն կը խառնուէր «Բաշայիև շա՛ր, Բաշայիև շա՛ր» ոչ-խոտելի ու յտակօրէն լսելի աղաղակը, զոր կոկորդալիք ու շիտթօք շունչով մը կ'արձակէր Պատիկ. Ընտրող. Ժողովին անխոնջ ու

գործունեայ անդամներէն մէկը:

Բաշան մեկնած, կնքուած քուէտուփը գօրգօրանքով ու շերտեւանդ երկիւղածութեամբ փոխադրուեցաւ Ազգ. Խորհրդարանը, ուր իր նիստը պիտի շարունակէր Ընտրող. Ժողովը, պահարաններուն քուէները վերաքննելու համար: Ընտրողական ժողովին կ'աշխատակցէին ժողովուրդին կողմէն Տեարք Ենորհրեան, Տաճարտեսան, Պէքարեան ու Մամուլին ներկայացուցիչներէն Փիլիսիկի Խմբագիրը, շրջապատուած ամբօխէն, որոնք չ'էին ուզեր վայրկեան մը զատուիլ քուէտուփին քովէն. քուէտուփին, որուն պարունակած քուէները պիտի վճռէին Ազգ. քահանգրիոյ հայ հասարակութեան տեղական ազգային վարչական դրութիւնը:

Ուրիշ սրտաշարժ պարագայ մը. հոն խոնոզները, ժողովական ու ժողովուրդ, պարզուկ և հապճեպ ճաշ մը ըրին Խորհրդարանին մէջ պանիր ու հացով, միևնոյն ժամանակ առաջ տարուելով քուէներուն քննութիւնները, որոնք արգէն աւարտելու վրայ էին, երբ դրսէն դարձեալ լսուեցան ծափաձայն աղաղակները կեցցէներուն, ողջունելու համար Վսեմ. Պօղոս Բաշային վեհօրէն մուտքը Խորհրդարանին մէջ:

Բնութիւնները վերջացան, քուէհամարի ժամը հնչեց. քուէտուփը — Տապանակ ուխտի — Խորհրդարանէն փոխադրել պէտք էր Ս. Տաճարը, ուր կանխաւ խոնած էր Ազգ. քահանգրիոյ բովանդակ հայութիւնը. բոլոր աթուները գրաւուած էին, ասեղ ձգելու տեղ չ'էր մնացեր, ժողովուրդին մնացած մասը լեցուած էր վերնատունը, ուր շատ մը ընտանիքներ եկած կըսպասէին առտուրնէ:

Ատեանը գրուած գրասեղանին շուրջը շարուեցան արձանագրութեան դպիւնները, որոնց թիւին վրայ աւելցած էին ուրիշներ ալ:

Քուէտուփը բացաւ Հնարող. Ժուզովին նախագահը Արժ. Տ. Յարութիւն Աւագ-Երէց Յակովբեանց ու քուէհամարը սկսաւ:

Հոն առիթը կը ներկայանար վերջիշելու Գեր. Տ. Վահրամ Մ. Վ. Ազարեանին օժտուն թոքերուն ու տուկուն կուրծքին անպայմանօրէն գերազանցութիւնը. ուստի, նկատելով քաջահնչուն ձայնի մը հետ յստակ առգանութեան մ'անհրաժեշտ հարկը, իրեն յանձնուեցաւ քուէները կարգաւոր փափուկ ու դժուար պաշտօնը, զոր, շտապե՛նք յայտարարելու, մեր ձայնեղ ու թոքունի Հայր Սուրբը կատարեց փառաւորապէս ու դիւցազնօրէն, չորս ժամ շարունակ մեծագոռ ձայնովը թնդացնելով տաճարը, մէկիկ մէկիկ կարգալով 3899 անուններ, իրենց մականուններովն ու տիտղոսներովը: Խղճամիտ ու արդար ըլլանք խոստովանելու թէ՛ Նորին Գեր. Հայրութիւնը հիանալի մասնագիտութիւն մը փայլեցուց մանաւանդ տիտղոսներուն արտասանութեանը մէջ:

Տեղն է հոս յիշելու թէ՛ 717 ընտրողներէն 557ը միայն մասնակցած էին քուէաշկութեան, ու քուէտուփին պարունակած քուէներուն թիւը կը կազմէր 557, որոնց 2ը միայն սպիտակ էին:

Արդ, քուէհամարի գործողութիւնն աւարտեցաւ ժամը 8<sup>12</sup>ին, հետեեալ արդիւնքը տալով.

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՇՍ. ՆՈՒՊԱՐ	549	ձայնով
» ԱԲՐԱՀ. ԲԱՐԹՈՂ. ՊԷՅ	348	»
» ՄԻՀ. ԳՍԼՅԱՆԱՆ ՊԷՅ	330	»
ԱԶՆ. Տ. ՅՈՎՀ. ՄՈՒԹԱՅԵԱՆՅ	330	»
» » ՀՍՅԿ ԷՔԻՉԼԷՐ	312	»
» » ԱԼԵՔ. ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ	296	»
» » ԳՍՈՆԻԿ ԶՊՈՒՔՃԵԱՆ	288	»

Ահա՛ ժողովուրդին ընտրած Նոր Թագականները, որոնք ընտրելիներն էին Սահմանադրութեան պաշտպաններուն,

և որոնց կրտսերագոյնը՝ դարձեալ 9 ձայնի բացարձակ առաւելութիւն ունի; ձայներուն ամբողջութեանը վրայ, որ ինչպէս գիտենք, 553 թիւէ կը բաղկանար:

Անկարելի է նոյն ցիւցեր հոս դնել նաեւ միւս քուէ առնողներուն անունները.

Տիար	Գրիգոր Մելքոնեան	քուէ	232
»	Զարեհ Սըվաղը	»	229
Վսեմ.	Կարապետ պէյ Րէիզեան	»	219
Տիար	Պերճ Օհանեան	»	205
Վսեմ.	Արթին պէյ Րէիզեան	»	193
Տիար	Գէորգ Իփէքեան	»	176
»	Յակոբ Ուղուրեան	»	30
Վսեմ.	Միքայէլ պէյ Րէիզեան	»	25
Տիար	Արմենակ Կամարակեան	»	23
»	Կարապետ Տերվիշեան	»	15
»	Երուանդ Աղաթօն	»	14
»	Տիգրան Կամարակեան	»	13
»	Գէորգ Սարգիսեան	»	13
»	Լեւոն Աժտէրեան	»	9
»	Յովհաննէս Շնորհքեան	»	9
»	Լեւոն Նիզամեան	»	5
»	Գրիգոր ձէվահիրճեան	»	3
»	Տ. ք. Յ. Թէօֆիլ	»	3
»	Տ. ք. Տ. Էնֆիէճեան	»	2
»	Անտօն Արթինօֆ	»	2
»	Մերամէթճեան Գէորգ	»	1
»	Օհաննէս Պաղոտալը	»	1
»	Գէորգ Օհանեան	»	1
»	Յովհաննէս Բելաքօֆ	»	1
»	Տ. ք. Մ. Ժամկոչեան	»	1
»	Ատամարոյժ Գ. Րէիզեան	»	1
»	Յարութիւն Զայլաքեան	»	1

Այս արդիւնքը նախատեսուած էր արդէն հասարակութեան ուշիմ ու ողջմիտ անդամներէ շատերուն կողմէն, անոնցմէ մանաւանդ, որոնք քիչ թէ շատ թափանցած էին ամբոխին հոգեբանութիւնը: Ու տարբեր արդիւնք մը կարելի չ'էր սպասել, քանի որ ժողովուրդին գիտակցութիւնը՝ հեռզհեռէ աւելի արթնցած էր մամուլին յայտնութիւններովը:

Այս գիտակցութիւնը մեկնուեցաւ իր ազնուագոյն ու ամենասրտաշարժ

ձևին տակ, երբ Գեր. Տ. Վահրամ Մ. Վ. Ազարեան բարձրաձայն կարգաց նոր թաղական ընտրելոց անունները: Տաճարը համախմբուած ամբօխը, ծովի պէս տասանիւ սկսաւ, ցնծութեան աղաղակներ խառնուեցան իրարու. ու իրօք պատմական եղաւ Մարտ 23ի ամբողջ կիրակին, առաւօտէ մինչև իրիկուն: Աղեքսանդրիոյ ազգ. պատմութեան ոսկեղօծ էջերէն մին պիտի մնայ յաւէտ անշնչելի:

Օտար մամուլը ստացուած արդիւնքէն հետեցնելով կը գնահատէ փայլուն յաղթանակը, զոր տարաւ ընդդիմադիր կուսակցութիւնը. «Բաց ի ն. Վ. Պօղոս Բաշայէն, կը գրէ էճիթըն Կագէթ, ո՛յ ոֆ նախկիններէն վերցնւորուեցաւ:

Սակայն երբ աչքի առաջ բերենք բոլոր ազնիւ անձնութիւնները, բոլոր ուղղամտութիւնը ու բոլոր հեռատեսութիւնները, որոնք ցոյց տըրուեցան նորին Վսեմութեան կողմէն, հո՛ս ալ Սահմանադրութիւնը գործադրել տալու և ժողովուրդին միջև համերաշխութիւնը վերահաստատելուն պատակով, չը պիտի վարանինք յայտարարելու թէ՛ Վսեմ. Պօղոս Բաշայ, իր լուսամիտ գաղափարներովը, յառաջդիմասէր ձգտումներովն ու անկեղծ ազգասիրութեամբը, Սահմանադրութեան պաշտպաններուն պիտը հանդիսացաւ: Հետեւաբար, այս նոր թաղական Խորհուրդը, իր ամբողջական բաղադրութեանը մէջ, կը համապատասխանէ տեղիս հասարակութեան օրինասէր ու դիտակից մասին — որ բարեբաղդաբար մեծագոյն ու կարեւորագոյն մասն է — ըզձանքներուն ու հետապնդած գաղափարներուն:

Ենտրհաւորե՛նք ուրեմն մեր նոր թաղական Խորհուրդին իւրաքանչիւր Պատկ. անդամը զատ զատ, ու մաղթե՛նք որ Մամուլը միշտ երջանիկ առիթներ ունենայ նշանակելու անոնց

օգտակար գործունէութիւնն ազգային կրթական, տնտեսական ու բարեգործական հաստատութեանց ու ձեռնարկներուն մէջ:

Փիւնիկը, որ շուրջ տարիէ մ'ի վեր մղեց պայքարը, հիմա վերջացէտով մը փակելով անցեալը, կը թողու մեռելներուն թաղել իրենց մեռելները. ա՛լ չը զիջանիր զբաղիլ գնայուն գերեզմաններով. ինկածը հարուածել՝ վատութիւն է. մեծանձնութիւն չէ՛ դնտակ պարպել ինկածներու վըրայ, վիրաւոր ըլլան թէ անշնչացա՛ծ:

Բայց միշտ յիշե՛նք Մարտ 23 ի կիրակին, որ Աղեքսանդրիոյ ազգային տարեգրութեանց մէջ տօնական մեծ օր մը պիտի մնայ: Այդ օրը, ժողովուրդին միահամուռ ձայնակցութեամբը, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈՍ ԱԼ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ նուիրագործուեցաւ օրինաւոր ընտրութեամբ նոր Սահմանադրական Խորհուրդին:

## Ք Ր Ո Ն Ի Կ

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

ԱՆԱՀԻՏԷՆ

ՎԻՔՅՈՐ ՀԻԿԿՈ ԵՒ ՀԱՆՈՐԹ. — Ֆրանսական Ակադեմիան որոշեց Բանթեմի մէջ ի պատիւ Հիւկօյի Ֆրանսական կառավարութեան կողմէ կազմակերպուած հանդէսին մէջ իբրեւ ներկայացուցիչ ընտրել պ. Հանթօն: Այս այլանդակ որոճման դէմ անհրաժեշտ էր որ հայ ժողովուրդը բողոքէր. «Քրթիթ Ռէքիպլի»-ը իր փետր. 25 ի բուին մէջ հրատարակեց հետեւեալ բողոքը.

«Մէկ ֆանի օրէն, Ֆրանսան պիտի սօնէ Վիքթօր Հիւկօյի յիշատակը. Բոլոր ժողովուրդներն իրենց բաժինը պիտի բերեն. մտնով, այս հանդիսաւոր

յարգանքին՝ հանդէպ մեծ բանաստեղծի մը, որ մարդոց եւ ժողովուրդներու եղբայրութիւնը երգեց եւ արსարեց արսայայտական գեղեցկութեան հրաշալիքներ որոնցմով բովանդակ մարդկութիւնը իրաւունք ունի հպարտանալու:

«Հայերը, որ խանդոս հիացում մը կը սածեն «Թշուառներ»ու հեղինակին վեհոգի գործին համար, արսանց պիտի մասնակցին այդ երախտագէտ բարեպաշտութեան ցոյցին դէպ ի երգիչն Արդարութեան եւ Գեղեցկութեան»:

«Բայց դժբաղդաբար պիտի ըլլայ մէկը «որ հանդէսը պիտի խանգարէ»:  
— Պ. Կապրիէլ Հանոթօն: Չեմ կրնար ըմբռնել թէ ի՛նչպէս Քրանսական Ակադեմիան կարողացեր է Ապսիւլ Համիդի բարեկամն ընտրել՝ փառաբանելու համար, յանուն Քրանսական դրարութեանց, «Պատահաւորներ»ու հեղինակին հանճարը: Չեմ հասկնար ի՛նչպէս այդ մարդը, որ բոլորովին հակառակն է արուեստագէտի մը կամ բանաստեղծի մը, պիտի կարենայ պանծացնել «Իւրերու Աւանդավէպ»ին այնքան գեղեցկագիտական զօրութիւնը. եւ չեմ հասկնար մանաւանդ թէ ինչպէս այդ չոր արտով ու նեղ մտքով դիւանագէտը, որ նոր ժամանակներու սարեգրութեանց արձանագրած հակամարդկային ամենէն մեծ ոճիրին ասեմը, դահիճին հետեղաւ զոհերուն դէմ, պիտի կարենայ սարփողել «Արեւելականներ»ու եւ «Ոճիրի մը պատմութեան» հեղինակին գործը: Ինձի նեմարսայէս սարօրինակ կը թուի որ Քրանսական Ակադեմիան, իր անդամներուն մէջ հաշուելով հանդերձ բարձր հոգով բանաստեղծներ, մտածողներ եւ պատմաբաններ, արտառոց գաղափարն ունեցած ըլլայ իրեն իբր ներկայացուցիչ Պ. Հանոթօն ընտրել՝ այսօր մեծաւոր եւ նշանակալից առիթի մը մէջ: Ցարը գոր այս ձախուրդ ընտրութիւնը կ'ազդէ Հայե-

րուն, այնքան մեծ է որքան իրենց զգացած ապուրթիւնը: Եւ կը կարծեմ թէ բոլոր օտար ժողովուրդները, ինչպէս, եւ վստահ եմ այդ մասին, շատ մը Ֆրանսացիներ՝ առանց կուսակցական խտրութեան, պիտի զգան նոյն ցաւն ու նոյն ապուրթիւնը»:

**Ա. ԶՊԱՆԵԱՆ**

*ԿԻԼԻԿԻԱՆ ՍՈՎԻՆ ԴԻՄԱՑ. ՎԵՐՉԻՆ շարթուան մէջ հասած կիլիկեան թղթակցութիւնները կը դուժեն սովին մուտքն ի կիլիկիա: Հալէպ, Բիւրս, Այնթապ, Մարաշ, Սիս, Ատանա, Հաճին ու, մանաւանդ Ջեթուհն, առհասարակ սովի վտանգին տակ կը գտնուին: Մանրամասնութիւնները յաջորդով:*

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

**Կ. ՊՈԼՍՈՅ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄՆԵՐԸ կը շարունակուին, զինուորականներէն 164 հոգի բանտարկուած են. 5ը զօրապետներ են: Փուտոս բաշայի կարծեցեալ գաւակիցներուն հարցաքննութիւնը կը շարունակուի: Մայրաքաղաքը մեծ յուզում կը տիրէ ու խուճապ:**

**ԱՆԿԼՈ-ՊՕԷՐԱԿԱՆ պատերազմին վախճանը մտաւուտ կը կարծուի, վերջերս կատարուող բանակցութիւններուն զանազան մեկնութիւններ կը արուին: Կը կարծուի թէ զօրավար Պօթա վերջին շարթուան մէջ մեծ յաջողութիւն մը տարած ըլլայ Անգլիացոց վրայ, որ անգլիական կառավարութեան կողմէն գաղտնի կը պահուի:**

**ԱՓՐԻԿԵԱՆ ՏՐԻՊՈԼԻՍ. Բօքօջօ Ռօմանօ լրագիրը կը շրէ այն զրոյցները, որոնց համեմատ Իտալիան պատրաստութիւններ ըրած ըլլար Տրիպօլիս արշաւելու: Դիւանագիտական շրջանակներն ալ կը հաստատեն այս հերքումը:**

**ՌՈՒՍԻՆՈՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ շքութումը տարածուեցաւ գործաւորական դասակարգին մէջ: Ոստիկանութիւնը**

խիստ միջոցներ կը գործադրէ զսպե-  
լու համար այս շարժումը, որ կ'սպառ-  
նայ յանգիլ ընդհանուր ապստամբու-  
թեան: Ներկայ 23 թուականով հե-  
ռագիր մը կը ծանուցանէ թէ Մոս-  
քուայէ 95 ուսանողներ Սերպիա աք-  
սորուեցան. 560 աւելի ուրիշներ ալ  
երեքէն վեց ամիս բանտարկութեան  
քշուեցան Արխանկէլ:

ԿԻՆԸ

Ինձ ամենէն աւելի սիրելի են կի-  
ները այն ժամանակ, երբ անոնք կը  
համբուրուին, որովհետեւ այդ ժամանակ  
(անոնք) պէտք է լռեն:

Վ. Նաշինսֆի

Արտասուքը արուած է կիներուն,  
անոր համար որ ծաղրեն տղամար-  
դերը: Էմ. Վերթէյեր

Կանայք զմարդիկ իբրև խաղալու  
թուղթեր նկատելով ժամանակ մը ա-  
նոնցմով կը խաղան և եթէ շահին, կը  
նետեն զանոնք ու նորեւր կը փնոր-  
ուեն:

— Երբ աղջիկներն ամուսնանա-  
լու տարիքին մէջ են, իրենց լռու-  
թիւնը անգամ էրիկ մը կուզէ:

Արդեօք ընդհանուրին շահն մաս-  
նաւորին շահուն չի զոհելու սկզբուն-  
քով է որ կիներէն ոմանք իրենց ա-  
մուսիններէն զատ ուրիշ անձեր ալ  
սիրելու տրամագիր կը դռնուին:

Յ. Պարոնեան

Կնոջ արդարութեան մարդ չի  
հաւատար, երբ զոհը կին է:

Շիլլեր

Որպէս զի կին մը գեղեցիկ նկատ-  
ուի, պէտք է որ չորս սև բաներ ու-  
նենայ, այսինքն՝ մազերը, յօնքերը,  
թարթիչներն ու բիւրերը. չորս՝ սպի-  
տակ, — մորթը, աչքի սպիտակուցը,

ակօաներն ու ձեռքերը. չորս՝ կարմիր,  
— լեզուն, շրթները, լինաբերն ու այ-  
տերը. չորս՝ երկայն, — կռնակը, թե-  
ւերը, մատներն ու սրունքները. չորս՝  
կլոր, — գլուխը, վիզը, արմուկն ու  
գաստակները. չորս՝ լայն, — ճակա-  
տը, կուրծքը, աչերն ու զիտերը.  
Չորս՝ նուրբ, — քիթը, շրթները,  
յօնքերն ու մատները (1):

Արար. առած

Հարսէց Ա. 2

(1) Այս հաշուով իգական գեղա-  
գրութեան մէջ 4 թիւը մեծ դեր է  
կատարում:

ՊՐՈՍՒՈՒՄԷՆ ԱՍԷ ԱՍՏՈՒԱԾ...

Եթէ ժամկոչ ըլլայի՝ թեքես փար-  
ձուէի բանակուի մը սկսելու տիրա-  
ցուի մը հետ, լուսարարներու հաճոյք  
պատճառելու սնափառութեամբ, բայց  
ժամկոչ չեմ, ուսի ներողութիւն կը  
խնդրեմ Տ. Եղիշ Թորոսեանէն որ  
պիտի չ'կրնամ պատասխանել ինձ ուղ-  
ղած եւ ուղղելիք տղերուն:

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք շնորհակալութեամբ Տ.  
Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆԻ «Le droit arménien de-  
puis l'origine jusqu'à nos jours» ֆրանսե-  
րէն տետրակը: Այս տետրակը հայկա-  
կան իրաւագիտութեան վրայ յիշատա-  
կագիր մ'է, զոր Բանաստի Պատ. Տը-  
նորէնը ներկայած է բաղդատական  
պատմութեան միջազգային դօնկրէին  
'ի Բարիզ, 1900ին:

— ԺՈՒՌ-ԿՈՃՈՊԱՄՈՒԵՔ. Բանաստեղծական վէպ, ԳՐԵՑ ՆՇԻԿ ԵՐԷՅ — վերջին սեւ տարիներուն արիւնոտ պատկերները. ռամկական սրտաշարժ ոտանաւորներ, որոնք զգայուն սրտէ մը բխած են:

Գինն է 1 զրան արծաթ. գիմել Խմբագրատունը:

### ՂԱԶԱՐՈՍ ՔԱԼԱՃԵԱՆ

Հնարիչ, Ուօշինկթընի կառավարութեան 1901 յունիս 11ին 1 տարուան համար « փաթէնթ » ստացած իր վերջին հնարած հեծանիւին համար, որ կրնայ թէ կիններու և թէ երիկ մարդոց համար գործածուիլ, երբ քակելով հակառակ կողմը շարուի:

Պն. Քալաճեան յունիս 28ին փաթէնթի ուրիշ գիմում մը ըրած է իր հնարած « ատճըսթէյպը Էքրսթէնչըն հանտըլպար » ի համար: Այս նորահնար կոտոշը ( հանտըլպարը ) երկու կտորներէ կը բաղկանայ. մէկ կտորը, որ Լ ձևն ունի, երբ մէկ կողմէն հեծանիւին վրայ հաստատուի, 3 մատնաչափ կը տարածուի, և թէ որ միւս կողմէն հաստատուի 4 մատնաչափ կը տարածուի: Երկրորդ կտորը Լ ձև կտորին որ և է ծայրին կրնայ հաստատուիլ: Եթէ վեր գարձուի՝ կոտոշը վեր կը բերէ, իսկ եթէ վար գարձուի՝ շատ վար կը բերէ, գրեթէ առաջին անիւի վրայ որով մըցելու և « փէյս » հեծնելու ատեն ճշգուծիւն կուտայ ընթացքին:

Այս նորահնար կոտոշը բոլորովին տարբեր և գերազանց է ցարգ գործածուած « Էքրսթէնչըն հանտըլպար » քն, որը գարձեալ պր. Քալաճեան հնարած է 1894 Հոկտ. 13ին և որ անկէ ի վեր բոլոր երկիրներու մէջ կը գործածուի: Պն. Քալաճեան զղջաց որ այն ատեն փաթէնթ չառաւ, ուստի՝ երկար ա-

տեն աշխատելէ ետք յաջողեցաւ աւելի գերազանց տեսակը հնարել ու փաթէնթ ստանալ:

Պն. Քալաճեան կ'առաջարկէ հիմա նախ՝ Հիւսէյնիկցիներուն և ապա բոլոր հայրենակիցներուն որ գրամագըլուի մը հաւաքելով հայ ընկերութիւն մը հաստատեն այս օգտակար գիւտերը շահագործելու: Ինքը պատրաստ է հարկ եղած բացատրութիւնները տալու:

Եթէ կան հեծանիւի արհեստը սորվիլ փափաքողներ՝ բոլոր ճիւղերն ալ կատարելապէս կը սորվեցնէ, միայն ձմեռը, որպէս զի սորվողը անձնական գործ մը կարենայ ընել ամառը, հեծանիւի եղանակին: Յօժար է նաև իր հաշուով խանութ մը բանալ, եթէ արհեստը գիտցող ըլլայ: Մանրամասնութիւններու համար գիմել

L. S. KALLAJIAN  
882 HARRISON AVE. BOSTON, MASS.

### ՄՏԻՊՈՂԱԿԱՆ

Փիլիսոփայ Բ. ՏՄ.ՐԵՇԲՁԱՆԸ լրանալու մօտ է, բայց Եգիպտոսի ու Արտասամանի մեր բաժանորդներէն շատերը գիտ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը:

Շարաթաթերթիս հրատարակութիւնն ու առաքումը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագիրը ՄԱՆՏՄ.ՐՕՍԹՈՎ, մեր հասցէին:

### ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Միաց. Նահանգներուն Ուստորը քաղաքէն հայրենակից մը մտադիր ըլլալով հայերէնի թարգմանել տալ արաբերէն գիրք մը, կը փնտռէ այդ երկու լեզուներուն հաւասարապէս հմուտ եղող անձ մը, որուն թարգմանչութիւնը բնա-

կանաբար պիտի վարձատրուի:  
Դիմել ֆիլիսիի խմբագ-  
րատունը. նամակ դրկել թեր-  
թիս հասցէին՝

S. Burat, Rédaction Punig,  
Alexandrie (Egypte)

**ՏՕԳԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ**

Ամերիկեան բժիշկ եւ վիրաբոյժ,  
մասնաւորապէս կը դարմանէ ջղային  
սկարուրիւնները ելեկտրականութեամբ,  
նաեւ կուրծքի, եւ ներքին գործարանաց  
հիւանդութիւնները: Աղբասներուն կը  
նայի ճիշտաբար: Ա.ռ. այժմ կը բնակի  
«Rue el Caied Gobar» անուն փողոցին  
մէջ թիւ 24 սան 2րդ յարկը, Մօրէլի  
խանութիւն մօտը: Ժամերը 10-11 կէս  
օրէն առաջ, եւ 3-5 կէս օրէն յետոյ:

Յիշեալ Տօգթօրը նաեւ սարիներու  
ուսումնասիրութեամբ լիովին համոզ-  
ուած ըլլալով թէ կարելի է առաջ-  
ուրնէ որաւել սեռի սեսակը ըստ կամս.  
այն ծնողք որ ու եւ է պատճառաւ նա-  
խամեծար կը համարին մանչ կամ աղ-

ջիկ գաւազ ունենալ, կրնան թէ՛ ան-  
ձամբ եւ թէ՛ նամակաւ իրեն դիմել  
եւ այդ մասին ձեռք առած ամենա-  
պարզ եւ միանգամայն ամենագոհա-  
ցուցիչ միջոցներէն օգտուիլ: Իր պայ-  
մանները դիրամասչելի են, եւ վար-  
ձատրութիւն չի պիտի պահանջուի ակն-  
կալուած արդիւնքը երեսան գալէ  
առաջ:

Նամակները պէտք է բովանդակեն  
նամակադրոճ, եւ ուղղուին հետեւեալ  
հասցէին. Dr. S. V. Ezékiahian, Post.  
Restante, Alexandrie (Egypte):

**Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԻՔ**

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉԲ  
Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսելի հայ տուներուն  
ծանօթ յանախօրդ, կը պատրաստեն  
գոհացուցիչ պայմաններով ամեն սե-  
սակ կահեղէններ, վարագոյր, եւն:

Յանձնարարութիւնք խնամով կը  
կատարուին:

Դիմել, Աղղարին, Ռիշել-Էլ-Չահապի,  
Attarine Ruelle-el-Zahaby

**SALAMANDER**

**ՍԱԼԱՄԱՆՏԵՐ**

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

**ԱՄՍԹԵՐՏԱՄ**

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս  
նաեւ Ծովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել ան Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

**ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ**

Աղեփասանորիս, պզտիկ Մէնչիե Ապուսաւրսա փողոց թիւ 10